# ՎՐԱՍՏԱՆ

«ՑՐԱՆՑԱՆՕ» (ՆԱՔԱՐՕՑՑԸԼՕ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 13 - 14 (16612) ՇԱԲԱԹ, 17 ՓԵՏՐՎԱՐԻ 2018 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

## ԱՆՆԱԽԸՆԹԱՑ ԵՐԵՎՈՒՅԹ՝ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

### ՓՈՔՐ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ՕՐԻՆԱՆԱԽԱԳԻԾ



*Փետրվարի 15-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու նախագահությամբ անցկացվեց երկրի կառավարության հերթական նիստը, որտեղ ներկայացվեց փոքր գործարարության խրախուսմանն ուղղված օրինանախագիծը:*

Ինչպես հայտարարեց Վրաստանի ֆինանսների նախարար Մամուկա Բախտաձեն, գերատեսչության կողմից մշակված օրինանախագիծը նախատեսում է դրամական շրջանառության վերին մակարդակի ավելացում եւ հարկային արտոնություններ: Մասնավորապես, փոքր ձեռնարեցներից դրամաշրջանառության հարկը նվազեցվում է. ներկայիս 5-ի դիմաց, այն կկազմի մեկ տոկոս: Բացի այդ, գործող օրենսդ-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎԵՀԱԺՈՂՈՎ

## ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՄՅՈՒՆԽԵՆՈՒՄ

*Փետրվարի 16-18-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, Վրաստանի պետական պատվիրակությունը, որի կազմում էին Վրաստանի փոխվարչապետ, ԱԳ նախարար Միխեիլ Ջանելիձեն, պաշտպանության նախարար Լեւան Իզորիան, մշակույթի եւ սպորտի նախարար Միխեիլ Գիորգաձեն, պետական անվտանգության ծառայության ղեկավար Վախթանգ Գոմելաուրին եւ արտաքին հարաբերությունների հարցերով վարչապետի խորհրդական Թեդո Ջափարիձեն մասնակցեցին Մյունխենի անվտանգության հարցերով 54-րդ վեհաժողովի աշխատանքին:*

Munich Security Conference msc
Münchner Sicherheitskonferenz

Մյունխեն կատարած աշխատանքային այցի շրջանակներում, Վրաստանի վարչապետը հանդիպումներ ունեցավ ԱՄՆ անվտանգության քարտուղար Ջեյմս Մետիսի, Եվրամիության ընդլայնման եւ բարիդրացիական քաղաքականության հարցերով եվրակոմիսար Յոհաննես Հանի, վեհաժողովին մասնակից քաղաքական մյուս գործիչների հետ: Վարչապետը մասնակցեց Վրաստանին հատուկ նվիրված «Վրացական քաղաքականությունը եւ գրականությունը» միջոցառմանը: Խորհրդաժողովի աշխատանքի շրջանակներում, Վրաստանի վարչապետը հանդիպում ունեցավ նաեւ գործարար աշխարհի ներկայացուցիչների հետ:

ՎՐԱՍՏԱՆ - ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՎՐԱԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ



*Փետրվարի 12-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին հանդիպում ունեցավ աշխատանքային այցով Վրաստանում գտնվող Եվրախորհրդարանի պատգամավորների պատվիրակության հետ:*

Հանդիպմանը Վրաստանի կառավարության ղեկավարը եվրախորհրդարանականներին ներկայացրեց երկրում անցկացված եւ ընթացիկ բարեփոխումները, Վրաստանի եվրոպական եւ եվրատլանտյան ինտեգրման ուղղությամբ իրականացված միջոցառումները, կրկին ընդգծեց, որ երկրի արտաքին քաղաքականության գլխավոր առաջնահերթությունը եւ իրականացվող բարեփոխումների գլխավոր նպատակը Եվրամիությանն անդամակցումն է:

Եվրախորհրդարանականները, իրենց հերթին, կրկին ընդգծեցին իրենց աջակցությունը Վրաստանում անցկացվող բարեփոխումներին՝ ընդգծելով այդ ճանապարհին երկրի առաջընթացը: Եվրախորհրդարանականները կրկին ներկայացրեցին իրենց պատրաստակամությունը Վրաստանի ինքնիշխանության եւ տարածքային ամբողջականության պաշտպանության հարցում:

Գիորգի Կվիրիկաշվիլին ընդգծեց Արեւելյան գործընկերության գագաթաժողովի շրջանակներում Եվրախորհրդարանի ընդունած բանաձեւերը եւ պատգամավորներին շնորհակալություն հայտնեց ցուցաբերած աջակցության համար:

ՓԵՏՐՎԱՐԻ 21-Ը ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՆ Է

## ՎԻՐԱՀԱՅ ԴՊՐՈՑԸ՝ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՊԱՆ

*Յուրաքանչյուր ազգ գոյություն ունի եւ հարատեւում է առաջին հերթին լեզվի շնորհիվ, որը մարմնավորում է նրա մտածողությունը, աշխարհայացքը, հոգեկերտվածքն ու ազգային ինքնագիտակցությունը:*

Փետրվարի 21-ին աշխարհը նշում է «Մայրենի լեզվի միջազգային օրը»:

Այդ տոնը Վրաստանում նշվում է 1978 թվականից, իսկ Հայաստանում 2005 թվականից:

Այսօր՝ տոնի նախօրեին, ուզում եմ խոսել վիրահայ դպրության մասին, որպես մեր երկրում լեզվի պահպանման հիմնական դարբնոց, մեկ անգամ եւս կարեւորել նրա դերն ու նշանակությունը պատշաճ կերպով պահելու եւ պահպանելու միտումով:

Սկսեմ ոչ հեռավոր պատմական անցյալից: 19-րդ դարի վերջին եւ 20-րդ դարի սկզբին հայկական մշակույթն իր բոլոր ճյու-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՀՈԲԵԼՅԱՆ

## «ԿՐՈՆԸ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ» ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ՎՐԱՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՎՏՈԿԵՖԱԼԻԱՅԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ

*Փետրվարի 12-ին Թբիլիսիում աշխատանքն սկսեց Վրաց ուղղափառ եկեղեցու ավտոկեֆալիայի վերականգնման 100-ամյակին նվիրված «Կրոնը եւ հասարակական կյանքը» խորհրդաժողովը:*




Խորհրդաժողովի աշխատանքին մասնակցեցին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, պաշտոնական այլ անձինք:

Խորհրդաժողովում ելույթ ունեցան նաեւ Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին եւ վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին:

Նրանք ելույթներում առանձնակի ընդգծեցին Վրաց ուղղափառ եկեղեցու դերը երկրի քաղաքական-հասարակական զարգացման գործում՝ որպես հասարակության խաղաղարար եւ միավորող ուժ:

Խորհրդաժողովի աշխատանքին մասնակցեց նաեւ Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը:

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

## ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՑՄԱՆ ԵՐԿԿՈՂՄ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹՅՈՒՆ



*Վրաց-հայկական խորհրդարանական կապերի խորացման, միջխորհրդարանական համագործակցության ընդլայնման կապակցությամբ, աշխատանքային այցով Թբիլիսիում էր գտնվում Հայաստանի Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների կոմիտեի նախագահ Արմեն Աշոտյանի գլխավորած պատվիրակությունը, որի կազմում էին Հայաստանի ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի անդամներ Կարեն Բեքարյանը եւ Արարատ Զուրաբյանը:*

Այցի շրջանակներում, հայ խորհրդարանականները հանդիպում ունեցան Վրաստանի խորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Սոփիո Կացարավայի, եվրոպական ինտեգրման հանձնաժողովի նախագահ, Եվրանեսթ ԽՎ-ում Վրաստանի խորհր-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ



Փետրվարի 16-ին կայացավ Վրաստանի առաջին փոխվարչապետ, էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Դմիտրի Քումսիշվիլիու եւ Վրաստանում Հայաստանի արտակարգ ու լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանի հանդիպումը:

Հանդիպմանը կողմերը գոհունակությամբ ընդգծեցին վրաց-հայկական տնտեսական հարաբերություններում նախորդ տարի գրանցված աճը, ինչպես եւ անդրադարձ կատարեցին երկկողմ հետաքրքրություն ներկայացնող տնտեսական մի շարք հարցերի:

Նշենք նաեւ, որ ճանաչողական հանդիպումների շրջանակներում, փետրվարի 9-ին կայացել էր նաեւ Վրաստանի Պետական անվտանգության ծառայության պետ Վախթանգ Գոմելաուրու եւ Վրաստանում Հայաստանի դեսպան Ռուբեն Սադոյանը հանդիպումը:

# Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՎԻԶԱ

## ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐ՝ ԱՆԱՅՑԵԳՐԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՐԳԸ ԽԱԽՏՈՂՆԵՐԻ ԴԵՄ

*Շենգենյան գոտու երկրներում իրենց անպարտաճանաչ վարքով աչքի ընկնող Վրաստանի քաղաքացիների դեմ, հնարավոր է, սահմանվեն որոշակի պատժամիջոցներ:*

Այդ հարցը քննարկվեց Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու կողմից հրավիրված հատուկ խորհրդակցությանը, որին մասնակցեցին փոխվարչապետ, արտաքին գործերի նախարար Միխեիլ Ջանելիձեն, ներքին գործերի նախարար Գիորգի Գախարիան, արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին, գլխավոր դատախազ Իրակլի Շոթաձեն եւ անվտանգության ծառայության պետ Վախթանգ Գոմելաուրին:

- Մենք քննարկեցինք այն մարտահրավերները, որոնց մեր երկիրը ընդհարվում է Արեւմտյան Եվրոպայի պետություններում: Մեր առանձին քաղաքացիներ, ովքեր մեկնում են Շենգենյան գոտու երկրներ եւ այնտեղ տեղաշարժվում, խախտում են անայցեգրային պայմանակարգը, մնում սահմանված ժամկետից ավելի կամ զբաղվում են հակաօրինական գործունեությամբ: Մեր պարտքն է պահպանել այն ձեռքբերումները, որոնց հասել է Վրաստանը վիզաների ազատականացման տեսանկյունից, այդ թվում՝ նաեւ օրենսդրական փոփոխությունների ուղղությամբ,- հայտարարեց արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին:

Խորհրդակցության արդյունքներով, Վրաստանի արտաքին գործերի նախարարությունը հանդես եկավ հատուկ հայտարարությամբ, որտեղ նշված է, որ Վրաստանի կառավարությունը շարունակում է մշակել օրենսդրական նախաձեռնություններ՝ ուղղված Վրաստանի քաղաքացիների կողմից Եվրամիության հետ անայցեգրային պայմանակարգի խախտումների թվի նվազեցմանն ու այդ խախտումների կանխմանը, ինչպես նաեւ նրանց կողմից ապաստարանի իրավունքի չաշարկմանը:

Ինչպես նշված է Վրաստանի ԱԳ նախարարության հայտարարության մեջ. «Եվրամիության առանձին երկրները, հաշվի առնելով Վրաստանում գործող ժողովրդական չափորոշիչների ու մարդու իրավունքների հետ կապված իրավիճակը, Վրաստանը ներառել են անվտանգ երկրների թվում: Այդ հարցերով աշխատանքը կշարունակվի մեր բոլոր գործընկերների հետ, թեպետ այն չի կարգավորվի անհատական կարգով գործընկեր երկրների հետ՝ երկկողմ պայմանավորածության հիման վրա: Հարկ է նաեւ հաշվի առնել, որ Եվրամիության անդամ մի շարք երկրներ չունեն երկրի բաժանման նման չափորոշիչներ»:



### ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑԸ ՎԻԼՆՅՈՒՍ

*Լիտվայի անկախության վերականգնման 100-ամյա հոբելյանի առիթով, Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին փետրվարի 16-ին, աշխատանքային այցով, գտնվում էր Վիլնյուսում: Վրաստանի նախագահից բացի, Լիտվայի անկախության վերականգնման 100-ամյա հոբելյանին նվիրված միջոցառումներին ներկա էին նաեւ Լատվիայի, Էստոնիայի, Լեհաստանի, Գերմանիայի, Ֆինլանդիայի, Իսլանդիայի, Ուկրաինայի նախագահները, Շվեդիայի եւ եվրոպական կառույցների ղեկավարներ:*

*Աշխատանքային այցի շրջանակներում, Վրաստանի նախագահը երկկողմ հանդիպումներ ունեցավ մյուս երկրների ղեկավարների հետ, որտեղ անդրադարձան մայիսի 26-ին անցկացվելիք՝ Վրաստանի անկախության 100-ամյա հոբելյանին նվիրված միջոցառումներին:*

### ԸՆԴԳԾՎԵՑ ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ՍԵՐՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԸ

*Փետրվարի 15-ին Վրաստանի առաջին փոխվարչապետ, էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Դմիտրի Քումսիշվիլին Բաքվում, հարավային գազատար միջանցքի խորհրդատվական խորհրդի նիստի շրջանակներում, նախարարի չորրորդ հանդիպման ժամանակ հանդիպում ունեցավ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ: Հանդիպմանը առանձնակի ուշադրություն հատկացվեց երկկողմ, գործընկերային սերտ համագործակցության հարցին:*

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

## ԴԱՎԻԹ ՍԵՐԳԵԵՆԿՈ. «ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՉԿԱՆ»

*Վրաստանի աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարար Դավիթ Սերգեենկոն խորհրդարանի առողջապահության եւ սոցիալական պաշտպանության կոմիտեին ներկայացրեց իր գլխավորած գերատեսչության կատարած աշխատանքի հաշվետվությունը:*



Նրա խոսքով, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության ոլորտում երկրորդային առաջնահերթություն չկա, եւ բոլոր առաջնահերթություններն արտակարգ նշանակալից են:

- Մեր նպատակն է սահմանափակ բյուջետային պայմաններում շարունակել առաջընթացն այն ուղղություններով, որպեսզի ծախսերը լինեն առավել արդյունավետ,- հայտարարեց նախարարը:

Խոսելով երկրի մասշտաբով բժիշկների գործունեության արդյունավետության մասին՝ Դավիթ Սերգեենկոն նշեց, որ նախարարությունը քաջատեղյակ է բժիշկների կողմից անհրաժեշտից ավելի շատ դեղորայքի դուրսգրման փաստի մասին, եւ գերատեսչությունը միջոցներ է ձեռնարկում այդ հակոտնյա երեւույթի վերացման ուղղությամբ:

Դավիթ Սերգեենկոն անդրադարձավ նաեւ դեղորայքի այն ցուցակին, որից մեկ լարիի կամ արտոնյալ արժեքի օգնությամբ օգտվում են սպառողների առանձին կատեգորիաները: Նախարարի հավաստմամբ, այդ ցուցակը կընդլայնվի, եւ ներկայումս դրանցում կներառվի 50 դեղորայքի անվանում, վավերացված 23-ի փոխարեն: Բացի այդ, Դավիթ Սերգեենկոն այդ ոլորտում գործող մասնավոր հատվածին կոչ արեց ընդլայնել գործընկերությունը պետական գերատեսչության հետ եւ այդ ենթատեքստում հանդես եկավ բնակչության որոշակի հատվածի համար, քրոնիկական հիվանդությունների դեղանյութերի մատչելիության մակարդակի բարձրացման նախաձեռնությամբ:

Կոմիտեական լսումներում Դավիթ Սերգեենկոն պատգամավորներին ներկայացրեց նաեւ 2018 թվականի համար ծրագրված նախագծերը:

### ՕԳՆՈՒԹՅԱՆ «SOS» ԼՈՒՌ ԱԶԴԱՆՇԱՆ՝ ՕՊԵՐԱՏԻՎ ԿԵՆՏՐՈՆԻՆ




*ՆԳՆ «112» դեպարտամենտը ստեղծել է բջջային հավելված, որի օգնությամբ ցանկացած մարդ Վրաստանի տարածքում կարող է թաքուն, անհապաղ օգնության մասին ազդանշան ուղարկել կառավարման օպերատիվ Կենտրոնի «SOS» օպերատորին, ինչպես նաեւ փոխանակվել կարճ հաղորդագրություններով:*

*Բջջային հավելվածը կարելի է ներբեռնել անհապաղ օգնության օպերատիվ Կենտրոնի ղեկավարման կայքից: Հավելվածը հասանելի է 3 լեզվով՝ վրացերեն, անգլերեն եւ ռուսերեն:*

*Հավելվածն անմիջապես կորոշի քաղաքացու տեղը, ինչն ակնհայտորեն կնվազեցնի հատուկ ծառայությունների դեպքի վայր գալու ժամանակը:*

*Այն ունի նաեւ գործառույթ. ինչպես ահազանգը գաղտնի ուղարկել «112» («SOS») եւ հաղորդագրությունների փոխանակում: Այդ գործառույթներից օգտատերը կարող է օգտվել, եթե նա խոսելու հնարավորություն չունի կամ էլ զանգի իրացումը վտանգ է ներկայացնում:*

ՆԱԽԱԳԻԾ

## ՄՐՑՈՒՅԹ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ

*Վրաստանի նախագահի հովանավորությամբ, կանցկացվի «Ուսանողները՝ պաշտպանություն սոցիալական ձեռներեցության-2018» մրցույթը:*

Մրցույթի նպատակը երիտասարդների շրջանում սոցիալական ձեռներեցության հիմնադրույթի ժողովրդականացումն է եւ այդ նախագծում երիտասարդների մասնակցության ակտիվացումը:

Վրաստանի նախագահի աշխատակազմի ղեկավար Գիորգի Աբաշիշվիլին հայտարարեց.

- Սոցիալական ձեռներեցության խրախուսումը կարեւոր նշանակություն ունի, քանի որ գործարարությունը սկսելուց բացի, այն միտված է օգնություն ցուցաբերել բնակչության առավել անպաշտպան խավին:

Ղեկավարը հավելեց, որ մրցույթով նախատեսված նախագծերը կֆինանսավորվեն նախագահի պահուստային հիմնադրամից, առավել եւս, եթե դրանք կիրականացվեն երկրի տարածաշրջաններում:

Նախագծի շրջանակներում, ուսանողներին իրավունք կվերապահվի հանդիպել եւ աշխատել ինչպես սոցիալական ձեռներեցների, այնպես էլ՝ բիզնեսհատվածի ներկայացուցիչների հետ: Սկզբնական փուլում, դրամաշնորհային ֆինանսավորում ստացած սոցիալական ձեռներեցների հետ միասին, ուսանողական թիմերը կկարողանան իրականացնել նաեւ իրենց նախագծերը:

Մրցույթի դիմումների ընդունումը կիրականացվի մինչեւ մարտի 13-ը:

### ԱՎՏՈԲՈՒՍՆԵՐՈՒՄ ՆՎԱԶԵԼ ԵՆ ԱՆՏՈՄՍ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ՏՈՒԳԱՆՔՆԵՐԸ

*2018 թվականի հունվարին Թբիլիսիում ավտոբուսով առանց տոմսի ուղեւորության համար տուգանվել է ընդամենը չորս մարդ: Անցյալ տարի տուգանված քաղաքացիների թիվը կազմում էր 242, 2016-ին՝ 1794:*

*Նշենք, որ առանց տոմսի ուղեւորության տուգանքը կազմում է 5 լարի:*

ԲՆԱԳԱՎԱՌ



## ԵՐԵՔ ՄԻԼԻԱՐԴ ԴՈԼԱՐ՝ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆԻՑ

### ՈԼՈՐՏԻ ՌԵԿՈՐԴԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

*Զբոսաշրջության ոլորտը Վրաստանի տնտեսության կարեւորագույն ոլորտներից մեկն է, եւ Զբոսաշրջության ազգային վարչակազմն առավելագույն ջանքեր կգործադրի դրա հետագա զարգացման համար:*

Այդ մասին հայտարարեց գերատեսչության ղեկավար Գիորգի Չոգովաձեն՝ ելույթ ունենալով արդյունաբերության մասնավոր հատվածի ներկայացուցիչների հետ հանդիպմանը:

Չոգովաձեն նշեց, որ 2017 թվականի արդյունքներով, զբոսաշրջության հատվածը ռեկորդային ցուցանիշներ է արձանագրել ինչպես Վրաստան այցելած զբոսաշրջիկների թվով, այնպես էլ՝ շահույթով:

- 2017 թվականին Վրաստան է ժամանել 7 մլն 554 հազար 936 միջազգային այցելու, ինչը 1 մլն 194 հազար 433-ով ավելի է 2016 թվականի համեմատ (աճը՝ 18,8 տոկոս): 2017 թվականին զբոսաշրջությունը երկրի տնտեսությանը բերել է ավելի քան 2 մլրդ 750 մլն դոլար, ինչը 27 տոկոսով ավելի է, քան 2016 թվականին: Սա աննախադեպ ռեկորդային ցուցանիշ է: Մեր խնդիրն է է՛լ ավելի զարգացնել զբոսաշրջությունը եւ առավելագույնս աջակցել այդ ոլորտին,- ասաց Զբոսաշրջության վարչակազմի ղեկավարը:

Հարկ է նշել, որ զբոսաշրջիկների՝ միջազգային այցելուների թիվը, ովքեր Վրաստանում անցկացրել են մեկ օր եւ ավելի, 2017 թվականին կազմել է ավելի քան 3 մլն 478 հազար (աճը՝ 27,9 տոկոս): 2017 թվականին ամենից շատ Վրաստան են այցելել Հայաստանի, Ադրբեջանի եւ Ռուսաստանի քաղաքացիները:

ՓԵՏՐՎԱՐԻ 21-Ը ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՆ Է

# ՎԻՐԱՀԱՅ ԴՊՐՈՑԸ՝ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՊԱՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ղերով ու դրսեւորումներով վիրահայությունը վիթխարի վերելք ապրեց: 1900-ական թվականների հայ հոգեւոր, մշակութային, կրթական, առեւտրաարդյունաբերական օրրան հանդիսացող Թիֆլիսը առանցքային նշանակություն ունեցավ հայ հասարակական-քաղաքական կյանքի ձեւավորման գործում:

Դեռեւս 19-րդ դարում այն ժամանակի Վրաստանի գրեթե բոլոր տարածաշրջաններում եղել են հայկական կրթօջախներ: 1881 թվականին Թիֆլիսի նահանգում հաշվվում էր 80 հայկական հոգեւոր վարժարան: Այդ դպրոցների ծախսերը հոգում էին եկեղեցին, հայ հասարակությունն ու մասնավոր բարեգործները: 19-րդ դարի երկրորդ կեսին աճում է հայկական դպրոցների թիվը: Միջնակարգ դասընթացներով գործել են Թիֆլիսի Գայանյան (1869), Մուղնու (1849) եւ Հովնանյան (1877), Ախալցիխեի Կարապետյան (1830) եւ Եղիսաբեթյան (1870) կրթարանները: Մեծ թիվ են կազմել մեկդասյա եւ երկդասյա եկեղեցական-ծխական դպրոցները: Մինչեւ 1885թ. մի քանի հայկական արական եւ իգական միջնակարգ դպրոցներ կային: Ցարական կառավարության կարգադրությամբ 1886թ. դրանք վերածվեցին երկդասյա տարրական դպրոցների: Ասենք նաեւ, որ 1897թ. մինչեւ 1905թ. հայկական ծխական ոչ մի դպրոց չի գործել:

Թիֆլիսի Ներսիսյան, Գայանյան օրիորդաց միջնակարգ եւ Մարիամյան-Հովնանյան անվանի կրթական հաստատությունների շարքում ամենանշանավորը Ներսիսյանն էր, որը հիմնադրվել է 1824թ. Վիրահայոց թեմի առաջնորդ Ներսես արքեպիսկոպոս Աշտարակեցու ջանքերով եւ գործել է 100 տարի: Այստեղ են ուսանել հայ մշակույթի աչքի ընկնող երեւելիներ Պ.Պռոշյանը, Ղ.Աղայանը, Հովի. Թումանյանը, Դ.Դեմիրճյանը, Խ.Աբովյանը եւ այլոք:

1918-1919 թթ. սկզբներին Վրաստանում ազգայնացվեցին միջնակարգ դպրոցները (գիմնազիաները):Պետական գիմնազիայի կարգավիճակ ստացան քաղաքի հայկական Երրորդ արական եւ Երրորդ իգական հաստատությունները: Զուգահեռաբար, շարունակում էին աշխատել Ներսիսյան, Գայանյան եւ Հովնանյան միջնակարգ դպրոցները:

Խորհրդային տարիներին հայաբնակ բոլոր շրջաններում բացվեցին պետական նախակրթարաններ, տարրական, այնուհետեւ 7-ամյա, 8-ամյա եւ միջնակարգ դպրոցներ, որոնք առաջնորդվել են Հայաստանի կրթության եւ գիտության նախարարության ծրագրերով, մեթոդներով ու դասագրքերով:

1991 թվականից, երկրի անկախացումից հետո էլ Վրաստանն այն միակ երկիրն է, որտեղ հայկական դպրոցները պահպանվում են որպես միայն պետական կարգավիճակ ունեցող հաստատություններ: Խորհրդային շրջանում երկրում գործում էր 156 հայկական միջնակարգ դպրոց, սակայն ժամանակի առաջացած մարտահրավերների պատճառով՝ արտագաղթի, սոցիալական, տնտեսական խնդիրների հետեւանքով, նվազեց այդ դպրոցների աշակերտների թիվը: Ինչպես ետխորհրդային բոլոր հանրապետություններում, Վրաստանում եւս կիրառվեց օպտիմալացման գործընթացը, միավորվեցին փոքր դպրոցները, եւ ներկայումս կա 130 կրթօջախ, որից 14-ը մասնաճյուղի կարագվիճակով՝ ռուսական կամ վրացական բաժինների հետ:

Անկախ Վրաստանում կրթության ոլորտի բարեփոխումները բուռն կերպով զարգացում ապրեցին 2005 թվականին, ընդունվեց «Հանրակրթության մասին» Վրաստանի օրենքը: Նույն թվականին հաստատվեց Ազգային ուսումնական ծրագիրը, որի հաստատումից հետո, երկրի ազգային դպրոցները, այդ թվում՝ հայկական կրթօջախները, ապահովվեցին Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության առարկայական ծրագրերով եւ օժանդակ նյութերով, բացի «Հայոց լեզու եւ գրականություն» առարկայից: Այն շարունակվում է դասավանդվել Հայաստանի կրթության եւ գիտության նախարարության ծրագրերով ու հաստատված դասագրքերով, որոնք անվճար մեզ է փոխանցում այժմ Հայաստանի սփյուռքի, նախկինում՝ կրթության ու գիտության նախարարությունը: Հավելեմ, որ Վրաստանի կրթության եւ գիտության նախարարությունը արդեն իսկ ստեղծել եւ հաստատել է հայոց լեզվի եւ գրականության չափորոշիչ ու առարկայական ծրագրեր տարրական աստիճանի (I-VI դասարաններ) համար: Նախատեսվում է դրանց հիման վրա ստեղծել հայոց լեզվի եւ գրականության դասագրքեր Հայաստանի կրթության եւ գիտության նախարարության հետ սերտ համագործակցությամբ:

Բարեփոխման շրջանակներում, Վրաստանի կրթության նախարարության կողմից իրականացված նախագծերով ու ծրագրերով հայկական կրթօջախներին անվճար տրամադրվել են վրացերենից թարգմանված բոլոր առարկաների դասագրքերը, տարրական դասարանների ուսուցչի մասնագիտական չափորոշիչը, դպրոցի տնօրենի օժանդակ ձեռնարկն ու բազային/միջնակարգ աստիճանի առարկայական չափորոշիչները, «ՈՒՍՈՒՑԻՉ» ամսագիրը եւ այլն: Տարածաշրջաններում աշակերտների վրաց լեզվի իմացության մակարդակը բարձրացնելու նպատակով, վրաց լեզվի եւ գրականության մասնագետներ են գործուղվել Սամցխե-Ջավախեթի, Քվեմո Քարթլի, Կախեթի: Ընդգծենք նաեւ, որ միջին մասնագիտական ուսումնարաններում սովորելու համար դիմորդին իրավունք է տրվում ընդունելության քննությունը պահանջել մայրենի լեզվով: 2009 թվականից երկրում գործում է այսպես կոչված «1+4» ծրագիրը, ըստ որի, հայկական եւ ադրբեջանական դպրոցների շրջանավարտները մեկ քննությամբ՝ մայրենի լեզվով ընդհանուր ունակությունից, կարող են ընդունվել ցանկացած բուհ, մեկ տարի նախապատրաստական կուրսում խորացված ուսումնասիրել վրաց լեզու, այնուհետ վրացերենով ուսանել նախընտրած բաժնում:

Նշյալ դրական փոփոխությունների կողքին հայկական դպրոցները զերծ չեն խնդիրներից: Խոսելով մեր կրթօջախներում մանկավարժական կադրերի մասին՝ պետք է ներկայացնել հետեւյալ պատկերը. ուսուցիչների 70%-ը 41 տարեկանից բարձր է, 30%-ը՝ 61-ից: Տարիներ շարունակ մեզ մասնագետներով ապահովող հիմնական բուհը՝ մայրաքաղաքի նախկին Ա.Պուշկինի անվան պետական մանկավարժական համալսարանն էր: *2014 թվականից Թբիլիսիի Իվանե Ջավախիշվիլու անվան պետհամալսարանում բացվեց տարրական դասարանների ուսուցչի մասնագիտության բաժին:* Անհրաժեշտ է է'լ ավելի աշխատանք տանել, որպեսզի նշյալ բաժնում դիմորդների թիվն ավելանա, որոնք հետագայում կփոխարինեն ավագ սերնդին:

Գաղտնիք չէ, որ երկրի հատկապես խոշոր քաղաքներում եւ մայրաքաղաքում բնակվող հայերի մի զգալի մասը չի տիրապետում հայերենին կամ տիրապետում է մասնակիորեն, որոշ տեղերում հայերենի գործածությունը սահմանափակվում է կենցաղային մակարդակի բանավոր խոսքով: Եթե ծնողները խորհրդային շրջանում գերադասում էին իրենց երեխաներին տանել ռուսական, ապա վերջին տարիներին տանում են վրացական դպրոցներ: Գալիս ենք այն եզրահանգման, որ վիրահայ դպրոցն այսօր կարիք ունի վերափոխման, բարելավման, ուժեղացման, սակայն ի՞նչ ճանապարհով եւ ինչպե՞ս. կարծում եմ՝ դրան կարելի է հասնել մշակելով համապատասխան ծրագրեր՝ շեշտադրելով բիլինգվալ՝ երկլեզու կրթությունը:

1994 թվականին Հայ Առաքելական եկեղեցու Վիրահայոց թեմին կից բացվեց կիրակնօրյա (մեկօրյա ուսուցմամբ), իսկ 2011 թվականից՝ շաբաթօրյա դպրոց: Բազմաթիվ հայեր, որոնք ինչ-ինչ պատճառներով կրթություն են ստացել եւ ստանում են ոչ մայրենի լեզվով, հաճախում են նշյալ դպրոցներ: Վերջին 5-6 տարիների ընթացքում թեմին կից տարբեր քաղաքներում ստեղծվել են մշակութային կենտրոններ, նախակրթարաններ, որոնք խթանում են հայեցի կրթության, մշակութային կյանքի զարգացումը:

Բնական է, որ թե' պետությունը, թե' համայնքը, թե' թեմը որոշակի պարտավորություններ են ստանձնել մայրենի լեզվի, մշակութային կյանքի կազմակերպման հարցերում, քանի որ մեր օրերում՝ գիտատեխնիկական առաջընթացի պայմաններում, բացասական ազդեցություններից եւ ուծացումից խուսափելու համար կարեւոր է, որ երկրի հայկական դպրոցը լինի մրցունակ, երեխային տա որակյալ կրթություն, դաստիարակի զարգացած եւ կիրթ սերունդ, որ հայ երիտասարդը ճանաչի եւ սիրի իր սեփական արմատները, ոչ միայն լինի իր մայրենի լեզվի կրողը, այլեւ փոխանցի հաջորդ սերնդին՝ պահպանելով մշակութային ինքնությունն ու ավանդույթները: Տեղին է մեջբերել մեր մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի խոսքերը. «Լեզուն է ամեն մի ժողովրդի ազգային գոյության եւ էության ամենախոշոր փաստը, ինքնուրույնության եւ հեռավոր անցյալի խոշոր դրոշմը, պատմության հեռավոր անցյալի կախարդական բանալին, հոգեկան կարողությունների ամենաճոխ գանձարանը, հոգին եւ հոգեբանությունը»:

Վիրահայ դպրոցը մեծ դեր ունի նաեւ հայատառ մեդիայի համար՝ ընթերցող, հայկական հեռուստահաղորդումների համար՝ ունկնդիր, հայ թատրոնին՝ հանդիսատես, հայ եկեղեցուն՝ հավատացյալ դաստիարակելու գործում: Պետք է է'լ ավելի սերտացնել դպրոցի եւ նշյալ օղակների միջեւ կապն ու համագործակցությունը, իրականացնել նորանոր նախագծեր, որոնցում ընդգրկված կլինեն դպրոցահասակ պատանիներ ու պարմանուհիներ: Հարկ է խորացնել հայ ընտանիքների հետ տարվող աշխատանքը, հատուկ ծրագրեր մշակել՝ առավել ընդգրկուն դարձնելով նրանց մասնակցությունը համայնքային կյանքում:

Մեկ անգամ եւս առանձնացնենք այն իրողությունը, որ Վրաստանի հայկական դպրոցները գործում են հայեցի հիմքով, եւ աշակերտների լեզվամտածողությունը հայերեն է: Այս ամենի հետ կարեւոր է, որ մեր շրջանավարտներն ազատորեն տիրապետեն նախ պետական լեզվին, ապա իմանան օտար լեզուներ, քանի որ նրանք, ապրելով եւ աշխատելով մեր երկիր Վրաստանում, պետք է կարողանան ինտեգրվել հասարակության մեջ ու դառնալ նրա լիարժեք քաղաքացին:

*ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

ՓՀԵՆՉՀԱՆ-2018. XXIII ՁՄԵՌԱՅԻՆ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐ

# ԳԻՈՐԳԻ ՍՈՂՈՅԱՆՆ ԱՐԺԱՆԱՑԱՎ ԼԵՐԻ ԽԱԲԵԼՈՎԻ ԳՈՎԵՍՏԻՆ

***Փհենչհանում անցկացվող Ձմեռային օլիմպիական խաղերին վրաց մարզիկներից առաջինը ելույթ ունեցավ 21-ամյա բակուրիանցի սահնորդ Գիորգի Սողոյանը: Նա կարողացավ հաղթահարել որակավորման մրցույթը եւ մասնակցել եզրափակիչ փուլին: Ընդհանուր հաշվարկում նա զբաղեցրեց 32-րդ տեղը:***



Մրցույթի ավարտին, Վրաստանի ազգային օլիմպիական կոմիտեի (ՎԱՕԿ) ղեկավարները հանդիպեցին Գիորգի Սողոյանի հետ, նրան շնորհավորեցին օլիմպիական անդրանիկ ելույթի առիթով եւ մաղթեցին հաջողություններ:

- Գիորգին երիտասարդ է, ընդամենը՝ 21 տարեկան, եւ այս Օլիմպիական խաղերը հիանալի հնարավորություն էին փորձի ձեռքբերման համար: Այսքան տիտղոսավոր սահնորդների հետ միասին մրցաշարին մասնակցելը նրա համար լավ դպրոց էր: Գիորգին Օլիմպիական խաղերի մասնակցության ուղեգիր ստացավ դրանց մեկնարկից մի քանի օր առաջ եւ այստեղ կարողացավ իր ցուցանիշներով գերազանցել ութ սահնորդի, ինչը ինքնին նշանակալից է,- հայտարարեց Վրաստանի ազգային օլիմպիական կոմիտեի նախագահ Լերի Խաբելովը:

Նշենք, որ մինչեւ պաշտոնական մրցաշարի սկսելը, Վրաստանի ԱՕԿ-ի, երկրի մշակույթի եւ սպորտի նախարարության, ինչպես նաեւ Հարավային Կորեայում Վրաստանի դեսպանության ղեկավարներն այցելեցին Փհենչհանում գտնվող վրացական օլիմպիական ավան, հանդիպում ունեցան վրաց օլիմպիականների հետ:

Նշենք, որ փետրվարի 12-ին օլիմպիականներն արդեն երկրորդ անգամ նշեցին վրաց սահնորդ Նոդար Քումարիտաշվիլու ողբերգական մահվան օրը: Հիշեցնենք, որ վրաց սահնորդը զոհվեց մարզումների ժամանակ, Վանկուվերի օլիմպիական խաղերի բացման նախորդ օրը:

Վրաստանի ներկայացուցիչներից լեռնադահուկորդ Նինո Ծիկլաուրին եւս մրցաշարում ավարտեց իր ելույթը՝ զբաղեցնելով 46-րդ տեղը:

Հայաստանցի մարզիկներից դահուկորդ Միքայել Միքայելյանը չկարողացավ անցնել որակավորման փուլը եւ դուրս մնաց մրցաշարից:

Ինչ վերաբերում է ըստ երկրների օլիմպիական մեդալների բաշխմանը, ապա, փետրվարի 16-ի դրությամբ, 9 ոսկե, 2 արծաթե եւ 4 բրոնզե մեդալներով՝ աղյուսակը գլխավորում է Գերմանիան: Առաջատարին հետեւում են Նորվեգիան (6 ոսկե, 8 արծաթե, 5 բրոնզե մեդալներ), Նիդերլանդները (5,5,2), ԱՄՆ-ը (5,1,2), Կանադան (4,5,4), Շվեդիան (4,2,0), Ֆրանսիան (3,2,2), Ավստրիան (3,1,4), Իտալիան (2,1,3), Հարավային Կորեան (2,0,1):

***Լուսանկարում.- (ձախից) ՎԱՕԿ-ի փոխնախագահ Դ.Խաբարելին, ՎԱՕԿ-ի նախագահ Լ.Խաբելովը, Գ.Սողոյանը, ՎԱՕԿ-ի փոխնախագահներ Է.Բերիշվիլին եւ Է.Ջենաիշվիլին Փհենչհանում:***